

ԿՐԹՈՒԹԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հետազոտական աշխատանք

Թեմա՝

ՄՀՋ (մոտոհրաձգային ջոկ) կազմը և մարտական հնարավորությունները

Հետազոտող՝ Սամվել Թամազյան

Լոռու մարզ , Ճոճկանի Գոռ Խուղինյանի անվան միջն. դպրոց

Ղեկավար՝ Գագիկ Էմինյան:

Վանաձոր 2022

Բովանդակություն

Ներածություն	3
ՄՀՋ (մոտոհրաձգային ջոկ) կազմը և մարտական հնարավորությունները	4
Եզրակացություն	9
Օգտագործված գրականություն.....	11

Ներածություն

Թեմայի արդիականությունը:

Մոտոհրաձգային ջոկը պարզագույն ստորաբաժանում է զինծառայության մեջ, Ջինված ուժերի համակարգում ցամաքային զորքերի տեսակ, որը նախատեսված է մարտական գործողություններ վարելու ինչպես ինքնուրույն, այնպես էլ այլ զորատեսակների հետ համատեղ:

Ջոկը ներառվում է՝

- մոտոհրաձգային,
- մոտոհետևակային,
- հետևակային,
- ականանետային,
- սակրային,
- կապի և այլ դասակների կազմի մեջ:

Մեկ դասակը կազմված է երեք ջոկից: Ռազմական գործողությունների ժամանակ ջոկը իրեն առաջադրված խնդիրը կատարում է դասակի կազմում:

Մոտոհրաձգային ջոկը լինում է հետևակի մարտական մեքենայով (ՀՄՄ) կամ զրահապատ փոխադրիչով (ՋՓ), իսկ հրաձգային ջոկը՝ ավտոմեքենայով:

Հետազոտական աշխատանքի նպատակը և խնդիրները:

Հետազոտական աշխատանքի նպատակն է ուսումնասիրել՝ ՄՀՋ կազմը և մարտական հնարավորությունները:

Խնդիրներն են՝

- ուսումնասիրել՝ ՄՀՋ կազմը,
- ուսումնասիրել՝ ՄՀՋ մարտական հնարավորությունները:

Հետազոտական աշխատանքի կառուցվածքը:

Հետազոտական աշխատանքը կազմված է՝ ներածական մասից, հիմնական մասից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

ՄՀՋ (մոտոհրաձգային ջոկ) կազմը և մարտական հնարավորությունները

Ջոկը շատ պետությունների զինված ուժերում այսպես կոչված սկզբնական, ամենափոքր, ամենաստորին մարտավարական ստորաբաժանումն է, որը բաղկացած է 6-ից 12 զինվորից՝ երբեմն սերժանտի կամ կրտսեր սերժանտի, երբեմն կապրալի և դրանց համարժեք կոչումներն ունեցող զինձառայողների հրամանատարությամբ: 2-4 ջոկը կարող են կազմել մեկ դասակ:

Որոշ արևմտյան բանակներում ջոկերը կազմված են սեկցիաներից, այլ բանակներում, ընդհակառակը՝ 2 կամ ավելի սեկցիան կարող են կազմել 1 ջոկ: Երբեմն ջոկերը կազմված են 2 կրակային խմբից, թիմից, կամ 1 կրակային և 1 մորիլ խմբից (թիմից):

Մոտոհրաձգային, մոտոհետևակային և հետևակային ջոկերը նախատեսված են դասակի կազմում հարձակման և պաշտպանության մարտական խնդիրներ իրականացնելու համար¹:

- - Ջոկի համարժեքը տանկային զորքերում և ռազմաօդային ուժերում համապատասխանաբար՝ տանկի կամ ինքնաթիռի, ուղղաթիռի անձնակազմն է (էկիպաժ):
- - Հրետանային զորքերում ջոկին համապատասխանում է հաշվարկը կամ հրանոթի հաշվարկը:
- - Ռազմական նավի անձնակազմում ջոկն իր մեջ միավորում է միևնույն մասնագիտության 2-ից մինչև 10 մարդ և սովորաբար մտնում է թիմի կամ խմբի՝ կոմանդայի կազմի մեջ:

ՆԱՏՕ-ի պետությունների բանակներում հետևակի և հեծելազորի դասակներում ջոկերը ստեղծվել են XX դարի 30-ական թվականներին՝ մարտական խմբերի փոխարեն:

¹ Տե՛ս, А.А. Бабаков., Вооруженные Силы СССР после войны (1945–1986 годов). История строительства. М.: 1987, с. 71–73:

ԱՄՆ-ի բանակում մոտոհետևակային (հետևակային) ջոկերը կազմված են.

1. ջոկի հրամանատար՝ ջոկապետ,
2. ջոկապետի օգնական՝ փոխջոկապետ,
3. 2 գնդացրորդ,
4. դիպուկահար,
5. հակատանկային ռեակտիվ համալիրի՝ ՀՏՌՀ նշանառու,
6. մեխանիկ-վարորդ,
7. հրանոթի նշանառու,
8. հրաձիգ:

Ներկայիս ՌԴ մոտոհրաձգային ջոկը, որը սպառազինության մեջ ունի զրահափոխադրիչ՝ ԶՓ, ունի հետևյալ կառուցվածքը՝

- ջոկի հրամանատար,
- գնդացրորդ,
- ավագ հրաձիգ (ԶՓ-ի գնդացրի նշանառու),
- դիպուկահար,
- հրաձիգ-նռնականետորդ,
- հրաձիգ-նռնականետորդի օգնական,
- 2 հրաձիգ (ինքնաձիգներով),
- ԶՓ-ի վարորդ:

Հետախուզության, երթային և պահակային հսկողության իրականացման ժամանակ ջոկերը կարող են գործել ինքնուրույնաբար: Ըստ իրադրության՝ ջոկը գործում է հետիոտն կարգով կամ հաստիքային զրահատեխնիկայի մեջ (ՀՄՄ, ԶՓ):

Հետիոտն կարգով հարձակվելիս ջոկը բացազատվում է շղթայաձև:

Պաշտպանության ժամանակ հետևակի ջոկին տրվում է մինչև 100 մետր լայնու - թյամբ ճակատային գիծ: Հարձակվելիս ջոկին հանձնարարվում է մինչև 50 մետր լայնությամբ ճակատ:

Հետևակը որպես կատարող ուժ

ՀՄՄ

ՀՄՄ կամ Հետևակի Մարտական Մեքենան, սա զրահապատ թարթչավոր մեքենա է, որի հիմնական ֆունկցիան հարձակման ճնշումն է: Նրա վրա տեղադրված է հակատանկային ական և հրթիռային համալիր: Նաև վերին մասում գնդացիր և հրանոթ: ՀՄՄ-ն պատված է հակազնդակային և հակաբեկորային զրահով և ունի հակամիջուկային համակարգ, որը պաշտպանում է ամբողջ մեքենան և հակատանկային ականի հնարավոր պայթյունը:

ԶՓ

Զրահափոխադրիչ կամ ԶՓ, անվավոր մարտական մեքենա է, որը նախատեսված է զինծառայողների և բարձրաստիճան այրերի մի տեղից մյուս տեղը տեղափոխվելու համար:

Զրահափոխադրիչի վրա տեղադրված է գնդացիր և մի շարք գիշերային տեսասարքեր: ԶՓ-ն պահպանում է կրակոցներից և միջուկային զենքի ճառագայթներից:

Մոտոհրաձգային ջոկի կազմը

Մոտոհրաձգային ջոկի կազմում կարող են լինել ինչպես շարքայիններ, այնպես էլ մի շարք այլ պաշտոնյաներ (օրինակ՝ եֆրեյտորներ և սերժանտներ):

Մոտոհրաձգային ջոկը կազմված է 9-11 հոգուց.

- ջոկի հրամանատար
- նռնականետորդ(Ն) և նռնականետորդի օգնական(ՆՕ),
- նշանառու օպերատոր(ՆՇՕ),
- գնդացրորդ(Գ),
- մեխանիկ-վարորդ (ՄՎ), վարորդ(Վ)
- ավագ հրաձիգ(ԱՀ) և նրան ուղեկցող երեք կրտսեր հրաձիգներ:

Համազորային մարտ.

Մարտ

Մարտը դա երկու և ավելի ստորաբաժանումների զինված ընդհարումն է: Մարտը կարող է սկսել սովորական տարածայնություններից և ավարտվել խոշոր կորուստներով: Մարտը կարող է ավարտվել երկու արդյունքներով, առաջին դեպքում մի կողմը հաղթում է, իսկ մյուսը՝ հակառակը: Մյուս դեպքում ավարտվում

է ինչ-որ տերության աջակցությամբ՝ հաշտությամբ: Մարտը հաղթանակին հասնելու միակ միջոցն է:

Ժամանակակից մարտը համազորային է: Համազորային մարտին մասնակցում են տարբեր զորամիավորումներ և զորատեսակներ: Նաև հանդիպում են դեպքեր, երբ հատուկ զորքերը համագործակցում են ռազմաօդային և ռազմածովային զորքերի հետ:

Պաշտպանություն

Մարտի այն տեսակը, որը խափանում է հակառակորդի հարձակումը կամ հնարավոր հարձակումը կոչվում է պաշտպանություն:

Պաշտպանությունը մարտի կարևոր բաղկացուցիչ մասերից է և մարտերի հետ միասին կազմում է մեկ ամբողջություն:

Պաշտպանությունը լինում է երկու տեսակի՝

1. հարկադիր,
2. կանխամտածված:

Ստորաբաժանումները կարող են հարձակման անցնել անմիջապես պաշտպանությունից հետո:

Հարձակում

Հարձակումը մարտի ամենակարևոր բաղադրիչն է:

Հիմնականում նրա նշանակությունը կայանում է նրանով, որ հակառակորդի նկատմամբ հաղթանակի կարելի է հասնել միայն հարձակման պարագայում:

Միայն վճռական հարձակմամբ կարելի է հասնել հաղթանակի: Հարձակումից առաջ սովորաբար անցկացվում է համապատասխան ուսումնական վարժանքներ՝ կրակային, շարային և այլն: Այս պարապմունքների նպատակը կայանում է նրանում, որ նախօրոք պլանավորված հարձակումները չեզոքացվեն:

Հարձակման վճռական պահը կոչվում է **գրոհ**:

Հարձակվող հակառակորդի վրա հարձակումը կոչվում է հանդիպական կայուն մարտ: Այն առաջանում է տարբեր իրավիճակներում: Նահանջող հակառակորդի վրա հարձակումը կոչվում է հետապնդում:

Մոտոհրաձգային ջոկի երթակարգը և մարտակարգը

Երթակարգ և մարտակարգ

Մոտոհրաձգային զորքերը և ստորաբաժանումները կարող են տեղաշարժվել մի վայրից մյուս վայրը և գործել երթակարգով:

Երթակարգը և մարտակարգը կախված է հակառակորդի գործողություններից և ռազմական տեղագրությունից:

Երթակարգը լինում է՝

1. միաշարասյուն,
2. երկշարասյուն:

Սրանք սահմանված են հետիոտնի և ցամաքային ռազմական մեքենաների համար: Սա ունի շարժման բարձր արագություն և ուժգնություն:

Մոտոհրաձգային ջոկի մարտակարգ

Մոտոհրաձգային ջոկի մարտակարգը զինծառայողների մարտ վարելու ժամանակ դասավորվածությունն է:

Մարտակարգը պետք է ապահովի անընդմեջությունը, նվազեցնի անձնակազմի խոցելիությունը հակառակորդի հարձակումից²:

Մոտոհրաձգային ջոկի մարտակարգը հետիոտն հարձակվելիս զինվորների միությունն է:

Զինծառայողների միջև միջին հեռավորությունը պետք է լինի 6-8 մ, իսկ երկու նոնականետորդների (կամ օգնականների) միջև պետք է լինի 1-2 մ: Շղթայի հետևից պետք է շարժվի զգոն հետևակը մարտական մեքենայով, իսկ վերևից ռազմաօդային ուժերը:

Պաշտպանությունում ջոկը զբաղվում է մինչև 100-110 մետր ճակատային դիրքով: Ամեն ինչ հիմնված է համապատասխան սպառազինության հետ: Զոկի մեջ գնդացրորդը տեղակայված է հրամանատարի կողքին: Նոնականետորդը գործում է անկախ: Ավագ հրաձիգը ունի փոփոխական դիրք, սակայն հիմնականում հանդես է գալիս հրամանատարի ՀՄՄ-ի կողքին:

² Ст'ю, Фулер., « Операции механизированных сил», Воентгиз 1933, с. 31-33:

Եզրակացություն

Հաշվի առնելով ստացված տվյալները՝ կարող ենք եզրակացություն անել և հաստատել.

Մարտական հնարավորությունները ցուցանիշներ են, որը բնորոշ է մարտական խնդիրը լուծելուն: Մարտական հնարավորությունների ցուցանիշները լինում են քանակական և որակական:

Մարտական հնարավորությունները կազմված են մոտոհրաձգային ջոկի՝

- քանակությունից,
- պատրաստակամությունից,
- բարոյաքաղաքական վիճակից,
- սպառազինությունից,
- հրամանատարական կազմից:

Մարտական հնարավորությունների վրա ազդող էական գործոններն են՝

- գործողությունների բնույթը,
- ժամը,
- տեղանքը,
- մթնոլորտային պայմանները,
- անվտանգ կենսագործունեությունը:

Մոտոհրաձգային ջոկի մարտական հնարավորության բնորոշող գծերն են՝

- կրակային հզորություն,
- զորաշարժային հզորություն:

Կրակային հզորությունը ներառում է՝

- հակատանկային և հակահետևակային ականները,
- զենք զինամթերքը,
- համաօդային ներուժը,
- համաջրային ներուժը:

Կրակային հզորությունը հակատանկային ականների միջոցով և ինքնա - ձիգների միջոցով տված կորուստների հնարավորությունն է:

Լրիվ սպառազինված մոտոհրաձգային ջոկը ընդունակ է պայքար մղել՝

- մարտական մեքենայի, ուղղաթիռների, և
- ոչնչացնել նրանց արտադրողական ձեռնարկությունը (շտաբը):

Դասի ընթացքում գործնականում կիրառելով ձեռք բերված տեղեկությունները ,աշակերտներին առավել մատրելի կերպով բացատրեցի ՄՀԶ_ի պատրաստակամության,քանակական կազմը:Ծանոթացան բարոյաքաղաքական վիճակին,սպառազինության և հրամանատարական կազմի քանակությանը:

Օգտագործված գրականություն

1. А.А. Бабаков., Вооруженные Силы СССР после войны (1945-1986 годов).
История строительства. М.: 1987 стр.287, օգտագործվել էմ էջ՝71_73
2. В. Крыжановский., «Мото-механизированная пехота» (Боевое использование и применение пехоты мехсоединений), Государственное военное издательство, Москва 1934օգտագործվել էմ էջ՝31_33
3. Фулер., « Операции механизированных сил», Воениз 1933